Հայոց ցեղասպանությունը վրաց պարբերական մամուլում 1914-1918 թթ., Թբիլիսի, «Ունիվերսալի» հրատարակչություն, 2011, 163+26 էջ (վրացերեն)*

Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս տեսած ուսումնասիրությունների, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուների շարքը համալրելու եկավ 2011 թ. վերջերին Թբիլիսիում հրատարակված «Հայոց ցեղասպանությունը վրաց պարբերական մամուլում 1914-1918 թթ.»[1] ժողովածուն, որի տպագրությունը նախաձեռնել է «Արդարության և ժողովրդավարության հայ-եվրոպական դաշնության» Վրաստանի գրասենյակը: Առաջաբանի հեղինակն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Օթար Ջանելիձեն**:

Ժողովածուն ընդգրկում է Վրաստանի խորհրդարանական ազգային գրադարանի վրացական պարբերականների արխիվում պահվող «Սաքարթվելո» («Վրաստան»), «Սամշոբլո» («Հայրենիք»), «Սախալխո փուրցելի» («Ժողովրդական թերթոն») թերթերում և «Կլդե» («Ժայռ») ամսագրում առկա Հայոց ցեղասպանության վերաբերյալ հաղորդումները, հրապարակումները, զեկուցումները և այլ նյութեր:

Հայտնի է, որ ներկայումս հիմնականում՝ քաղաքական դրդապատճառներով, վրաց հասարակայնությունը խիստ վերապահումներով է մոտենում Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին: Պաշտոնական մակարդակով հրապարակային քննարկումները չեն խրախուսվում, իսկ վրաց գիտնականների և հասարակական գործիչների առջև հաճախ արգելք է դրվում: Ուստի ժողովածուի հրատարակումը կարելի է լուրջ քայլ համարել Վրաստանում հարևան ժողովրդի պատմության ողբերգական էջի մասին բարձրաձայնելու առումով:

Ժողովածուի խմբագիր Օթար Ջանելիձեն մուտքի խոսքում նշում է, որ Առաջին աշխարհամարտի տարիներին հայերը ստիպված էին գաղթել հարևան երկրներ: Վրաց հասարակայնությունը ոչ միայն եղավ այդ զարհուրելի ոճրի ականատեսը, այլև մամուլի միջոցով արձագանքեց դրան: Այդ արձագանքն էլ, ըստ պատմաբանի, կատարված դեպքերի յուրահատուկ գնահատականն էր: Օթար Ջանելիձեն 20-րդ դարասկզբի իրադարձությունները բնորոշում է որպես ցեղասպանություն և համոզմունք հայտնում, որ ժողովածուն իր լուրջ տեղը կունենա հայոց մեծ ողբերգությունը լուսաբանող գրականության մեջ[2]:

Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել Վրաստանի անմիջական հարևանությամբ: Ավելին, վրաց ժողովուրդն ինքը ստիպված է եղել, թեև դժկամությամբ, իր երկրում ընդունել ցեղասպանության հետևանքով գաղթական դարձած բազմաթիվ հայորդիների: Այս տեսանկյունից ժողովածուի մեջ առկա նյութերը գումարվելով Հայոց ցեղասպանության մասին տարածաշրջանում ու նրա հարևանությամբ բնակվող մյուս ժողովուրդների՝ բուլղարների, հույների,

*Ընդունվել է տպագրության 25.04.2012:

1 სომეხთა გენოციდი ქართულ პერიოდიკაში 1914-1918, თბილსი, “უნივერსალი”, 2011 წ., 163+26 გვ.

2 Նույն տեղում, էջ 11:

ռուսների, արաբների ու պարսիկների մոտ պահպանված տեղեկություններին, ամբողջացնում են հայ ժողովրդի մեծ ողբերգության վերաբերյալ հարևան երկրներում առկա պատմական հիշողությունը:

Հատկանշական է այն իրողությունը, որ 20-րդ դարասկզբի վրացական մամուլը, ընդհանուր առմամբ, այնքան էլ հայամետ դիրքորոշում չի ունեցել: Հայտնի է, որ վրաց ազնվականությունը խանդով էր վերաբերվում 19-րդ դարում և 20-րդ դ. սկզբին Թիֆլիսում և Վրաստանի այլ քաղաքներում լուրջ դիրքեր նվաճած հայերի տնտեսական ու մշակութային մեծ ներուժին: Այս հանգամանքն իր արձագանքն էր գտնում վրացական մամուլում, որը երբեմն խիստ բացասաբար է արտահայտվել ոչ միայն թիֆլիսահայության, այլև ընդհանրապես՝ ողջ արևելահայության հասցեին, ինչպես նաև որոշակի տագնապ է դրսևորել Արևմտյան Հայաստանի ազատագրման հեռանկարի հանդեպ: Այս ամենով հանդերձ, վրաց պարբերականներում, որոնք հիմնականում ունեցել են ազգայնական ուղղվածություն, զգալի տեղ են զբաղեցրել Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ վայրերում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրապարակումները:

Վրացական պարբերականների այս հրապարակումները ներկայացնում են դեպքերի ընդհանուր առմամբ՝ առարկայական պատկերը: Հարկ է նշել, որ գրախոսվող ժողովածուում ամփոփված նյութերի մի ստվար մասը, հատկապես հարցազրույցները, ականատեսների հաղորդումները, տպավորությունները, աղբյուրագիտական կարևոր արժեք ունեն: Այստեղ պարունակվում են նաև նյութեր, որոնք վրացական պարբերականներում արտատպվել են հայկական, ռուսական և եվրոպական մամուլի էջերից:

«Հայոց ցեղասպանությունը վրաց պարբերական մամուլում 1914-1918 թթ.», ժողովածուի մեջ ժամանակագրական հերթականությամբ առանձնացված են հինգ բաժիններ:

1914 թվականին վերաբերող բաժնում հիմնականում տեղեկություններ են ներկայացված ցեղասպանության նախօրեին Արևմտյան Հայաստանում տիրող կացության վերաբերյալ:

Այսպես՝ 1914 թ. հունվարի 10-ին «Սախալխո փուրցելի»-ն գրում էր, որ հայկական բարենորոգումների գործը դարձյալ չի պարզաբանվում[3]: Ավելին, օգտվելով եվրոպական պետությունների միջև արդեն իսկ գերլարված հարաբերություններից, Օսմանյան կառավարությունը հրաժարվում է բարեփոխումներ անցկացնել:

Թերթում խոսվում էր նաև օսմանյան զորքերի՝ դեպի ռուս-թուրքական սահման կատարվող տեղաշարժերի մասին[4], ինչը վկայում էր, որ Թուրքիան պատերազմ է սկսելու Ռուսաստանի դեմ: Այս բաժնում հետաքրքրական նյութեր կան նաև օսմանյան կառավարության կողմից ողջ կայսրության տարածքում հայերի հանդեպ ատելություն սերմանելու, իսկ Արևմտյան Հայաստանում՝ հայ-քրդական բախումներ հրահրելու քաղաքականության վերաբերյալ:

Հետաքրքիր են նաև նաև Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության մասին վրացական մամուլի հաղորդումները: «Սախալխո փուրցելի»-ի 1914 թ. հոկտեմբերի 29-ի համարում (թիվ 124) նշվում է, որ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում հայերը մեծամասնություն են՝ կազմելով ընդհանուր բնակչության 38,9 տոկոսը, այն դեպքում, երբ թուրքերը նույն նահանգներում բնակչության 25,4

3 Տե՛ս նույն տեղում, էջ 15:
4 Տե՛ս նույն տեղում, էջ 17:

տոկոսն են, իսկ քրդերը` 29,7 տոկոսը[5]:

1915 թվականին վերաբերող բաժնում ներառված նյութերում ներկայացվում են թուրքերի կողմից գործադրված բռնությունները, արևմտահայ գաղթականների կրած զրկանքները, նրանց ծանր վիճակը: Նկարագրվում են նաև Վանում, Սասունում և այլ վայրերում հայերի մղած ինքնապաշտպանական կռիվները:

Այստեղ ներկայացված են նաև հաղորդումներ երիտթուրքերի համաթուրանական նպատակների մասին: «Սախալխո փուրցելի»-ն, վկայակոչելով երիտթուրքական թերթերից մեկին, 1915 թ. ապրիլի 14-ին գրում էր, թե թուրքերի համաթուրանական երազանքն է պատերազմը շարունակել այնքան, մինչև ռուսական հզորությունը ջախջախվի և ռուս-թուրքական սահմանը դառնա Կովկասյան լեռնաշղթան[6]:

Վրացական մամուլն անդրադառնում էր նաև հայերի կոտորածների հանդեպ օտար պետությունների արձագանքներին: «Սաքարթվելո» թերթը 1915 թ. դեկտեմբերի 16-ին գրում էր, որ հայկական հարցը քննարկվել է անգլիական խորհրդարանում[7]: Խոսվում էր նաև Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տրամադրելու նպատակով լորդ Բրայսի գործադրած ջանքերի մասին[8]:

1916 թվականին վերաբերող նյութերում նկարագրվում են կոտորածները, որոնց արդյունքում սպանվել են ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք, երեխաներ և ծերեր: Վրացական թերթերն արձանագրում են ցեղասպանության ծրագրված բնույթը, նկարագրում երիտթուրքերի վարած նենգ քաղաքականությունը: «Սախալխո փուրցելի»-ն իր 1916 թ.հունվարի 9-ի համարում մատնանշում է այն իրողությունը, որ թուրքերը կարճ ժամանակամիջոցում փոխել են Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը[9]:

1917 թվականին վերաբերող բաժնում մեծաթիվ նյութեր կան գաղթականների վիճակի, Արևմտյան Հայաստանից դեպի Անդրկովկաս նրանց տեղաշարժերի և կրկին հայրենի բնօրրաններ վերադառնալու ծրագրերի վերաբերյալ: Խոսվում է հայ-քրդական հնարավոր բախումների մասին, վկայաբերվում է Բերկրիում տեղի ունեցած նման մի դեպք: «Սաքարթվելո»-ի հոդվածագիրը մտահոգություն է հայտնում, որ ցարական կառավարությունը միջոցներ պետք է ձեռնարկի ազատագրված Արևմտյան Հայաստանում 1905-1906 թթ. հայերի և թաթարների միջև տեղի ունեցածի կրկնությունը թույլ չտալու համար[10]:

Բավականին մանրակրկիտ են ներկայացված Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակի շուրջ գոյություն ունեցող տեսակետները: Օրինակ` 1917 թ. մարտի 24-ին «Սաքարթվելո»-ն գրում է, որ Մոսկվայի հայկական կոմիտեն դիմել է իշխան Լվովին` Արևմտյան Հայաստանին անկախություն կամ ինքնավարություն տրամադրելու առաջարկով[11]: Ներկայացվում է նաև թուրքական բռնությունների աշխարհագրության ընդլայնումը դեպի Կովկաս: Այս կապակցությամբ խոսվում է Բաքվում և Նուխիում հրահրվող հայ-թաթարական ընդհարումների մասին, որոնք տվյալ ժամանակաշրջանում դեռևս կանխվում էին[12]:

Արժանահիշատակ է ժողովածուում մեջբերված` Լլոյդ Ջորջի խոսքը,

5 Տե՛ս նույն տեղում, էջ 20:
6 Տե՛ս նույն տեղում, էջ 36:
7 Տե՛ս նույն տեղում, էջ 70:
8 Տե՛ս նույն տեղում, էջ 76-78:
9 Տե՛ս նույն տեղում, էջ 87:
10 Տե՛ս նույն տեղում, էջ 130:
11 Տե՛ս նույն տեղում, էջ 127:
12 Տե՛ս նույն տեղում, էջ 128:

համաձայն որի՝ հայերը Միջագետքում բռնությունների են ենթարկվել թուրքերի կողմից[13]:

1918 թվականին վերաբերող նյութերի մեջ ներկայացված են Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի նահանջը և դրան հաջորդած՝ թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս: «Սաքարթվելո»-ի հրապարակումներում նկարագրվում են Թիֆլիսի նահանգում և նրան սահմանակից տարածքներում հայերի հանդեպ իրականացված հալածանքներն ու կոտորածները: Թերթի հունվարի 5-ի համարում հոդվածագիրը հայտնում է, որ Ախալցխայի գավառում հայերին կոտորելու գործում թուրքական կանոնավոր զորքերին աջակցում էին տեղի մահմեդականները[14]: Թերթը մեջբերում է Արդահանից, Արդվինից, Կարսից ուղարկված հեռագրերը, որոնցում ևս խոսվում է թուրքերի կատարած բռնությունների և կոտորածների մասին:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Գանձակի և Բաքվի նահանգներում հայերի կոտորածների վերաբերյալ հաղորդումները: Խոսվում է Թուրքիային պատասխանատվության ենթարկելու նպատակով օտար պետությունների գործադրած ջանքերի մասին: Օրինակ՝ իր մայիսի 11-ի համարում «Սաքարթվելո»-ն գրում է, որ հայկական կոտորածների հարցը քննարկվել է գերմանական Ռայխստագում[15]:

Այսպիսով՝ 1914-1918 թվականների ընթացքում վրացական մամուլը լայնորեն անդրադարձել է օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությանը: Այդ տարիների վրացական մամուլի էջերում հարուստ վկայություններ կան նաև Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի այլ վայրերում թուրքական զորքերի և տեղի մահմեդական բնակչության կողմից ցեղասպանության շարունակման փաստի վերաբերյալ:

Վրացական մամուլում Հայոց ցեղասպանությունը նկարագրող հարուստ նյութերի առկայությունը ինքին փաստում է տեղի ունեցող ողբերգական իրադարձությունների հանդեպ ժամանակի վրաց հասարակայնությանը համակած մտահոգությունը: Եվ չնայած վրացական թերթերում հանդիպող որոշ հրապարակումների հակահայ երանգներին ու կողմնակալությանը, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ անժխտելի է դրանցում առկա գնահատականների առարկայական բնույթը:

Մեր կարծիքով, «Հայոց ցեղասպանությունը վրաց պարբերական մամուլում 1914-1918 թթ.» ժողովածուի հրատարակությունը լուրջ խթան կհանդիսանա Վրաստանում Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրությունը սկսելու և ծավալելու համար: Իսկ դա իր հերթին վրաց հասարակայնությանը հնարավորություն կտա հստակեցնելու և ամբողջացնելու հարևան ժողովրդի հանդեպ գործադրված մեծ ոճրագործության սեփական գնահատականը:

Խաչատուր Ռ. Ստեփանյան
Պատմ. գիտ. թեկնածու

The Armenian Genocide in Georgian Periodicals, 1914-1918
“Universali” Publishing House, Tbilisi, 2011 (Georgian)

Khatchatur R. Stepanyan

13 Տե՛ս նույն տեղում, էջ 128:
14 Տե՛ս նույն տեղում, էջ 133-134:
15 Տե՛ս նույն տեղում, էջ 146: